

ՅԻՇԻՐ՝ ԱՊՐՈՒՄ ԵՍ ՄԵՌՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
(ԴՈՒԵՄ)

1

Այս խօսքս յիշիր, յիշիր միալար,  
Որ դու ապրում ես... մեռնելու համար:  
Մի՛ ուրախացիր քո կեղծ բարովթեամբ,  
Մի՛ հպարտացիր քո փարթամովթեամբ,  
Տերեակալած, դալար թարմովթեամբ  
Կամ յաջողովթեամբ անթիւ, անհամար,  
Յիշիր՝ ապրում ես մեռնելու համար:

Չուր ես անտեղի այդպէս պարծենում,  
Չուր ես զրկելով, այդպէս բարձրանում,  
Չուր ես մոլուցքով մթնում, թանձրանում,  
Կամ էլ՝ սողալով մէկից ցածրանում:  
Գնա, լուացուիր Զրով Կենարար,  
Քանզի ապրում ես... մեռնելու համար:

Յիշիր, որ հիւր ես դու այս աշխարհում,  
Էլ ի՞նչ ես մսում վերին բարձունքում,  
Որ էլ չողաս վշտի արցունքում,  
Ինչո՞ւ ես ապրում մեղքով միալար,  
Չէ՞ որ ապրում ես... մեռնելու համար:

Յիշիր որ դու էլ մի անցաւոր ես,  
Յիշիր, որ դու էլ մի յանցաւոր ես,  
Որի համար դու հաշիւ պիտի տաս,  
Որի համար դու, անշուշտ պիտի լաս,  
Եթէ ջրշտապես թողովթեան համար,  
Հոգուր մաքրովթեան, սրբովթեան համար,  
Քանզի ապրում ես... մեռնելու համար:

Յիշիր, աշխարհից մերկ ես գնալու,  
Յիշիր, որ կրկին աշխարհ չես գալու,  
Որ ընկար, դուտքոյ էլ չեն բացելու,  
Որ մարդիկ վըրադ կեղծ են լացելու:  
Կ'ասեն. «Ինչ լաւ է, աշխարհից գնաց,  
Այս, ինչ իրենն էր, այն էլ մեզ մնաց»...

2

Թում է՝ մարդը ներող է, բարի,  
 Թում է՝ մարդը կտրիծ է, արի,  
 Բայց եթէ մահն է իրեն հիւր գալիս,  
 Ահ ու դողով է հըրաժեշտ տալիս,  
 Զգում է իրեն թշուառ ու անձար,  
 Քանզի է չկայ փրկութեան մէկ ձար:  
 Մարդը անզօր է արդէն գործելու,  
 Մահուան երախը՝ ձեռքով գոցելու:  
 Նա ակամայից անցեան է յիշու,  
 Վատ արարքներն են իր սիրտը մաշում:  
 Ասում է ներկած տողերն անհամար,  
 Ասում է նաև խըրախանքները,  
 Որ ի զուր էին զուարձանքները...  
 Որ մի ծաղիկ էր՝ ծլեց ու անցաւ,  
 Մի դալար ձիւլ էր՝ արդէն չորացաւ:  
 Եւ այդ ամենը դարձել է անցեալ,  
 Ինքը եղել է մէկը անհիծեալ,  
 Որ յոյս չի տուել անյոյս ընկածին,  
 Որ չի հոգացել մերկ ու սովածին,  
 Որ գոցել էր միշտ դուռը բարութեան  
 Եւ դարձել մի ձուկ՝ ծովում մեղկութեան:  
 Ախ, երանի թէ ամէն օր յիշեր,  
 Միայն ունենար բարութեան յուշեր,  
 Մանկութեան օրից միշտ մոքում մսար,  
 Որ ինքն ապրում էր... մեռնելու համար...

ՄԻՌՆ ՍՎԱՐԵԱՆ